

# ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐ

(ավանդական ու արդիականը)

Յիատարակիչ՝ ՅԱՅՍԱՏԱՆԻ ԴԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երեւան 2002թ.

Սույն գրքույկում, ընդհանուր գծերով, ներկայացված են Հայոց մի շարք տոններ, որոնք, գալով մեր նախաքրիստոնեական շրջանից, նշվում են նաև Հայ եկեղեցու կողմից: Շարադրանքում, առավելապես, ներկայացված է տոների ավանդական բովանդակությունը:

Հաշվի առնելով տոների դաստիարակիչ եւ համախմբիչ նշանակությունը՝ հուսով ենք, որ Հայոց պետությունը եւ եկեղեցին կփորձեն վերակենդանացնել հազարամյակների խորքից Եկող մեր ազգային տոները՝ դրանք մատուցելով նորովի, ինչպես եւ պահպանելով դրանց ավանդական խորհուրդները:

Գրքույկում տեղ գտած նյութերը հրատարակության է պատրաստել ազգագրագետ Արմինե Սարգսյանը՝ «Հանրապետական» թերթում իր, ինչպես նաև Լուսինե Օրդուխանյանի եւ Սուսաննա Մելիքյանի հեղինակած հոդվածների հիման վրա:

## ՆՈՐ ՏԱՐԻ

Ըստ հասած տվյալների, վաղնջական ժամանակներում հայերը Նոր տարին դիմավորել են մարտի 21-ին՝ գարնանային գիշերահավասարի օրը, ինչը պատահական չէր: Բնությունը հարություն է առնում գարնան սկզբին, այդ պատճառով հենց այդ օրն էլ հայ մարդը դարձրել է Նոր տարի եւ նշել ցնծալի տոնախմբությամբ, որով փառաբանել է բնության զարթոնքը, աղերսել աստվածներին, որպեսզի տարին բերքառատ դարձնեն (այսօր էլ արիական որոշ ժողովուրդներ՝ պարսիկներ, աֆղաններ, իբրև տարեսկիզբ՝ ընդունում են մարտի 21-ը):

Յայկական երկրորդ տարեգլուխը եղել է Նավասարդի 1-ը (օգոստոսի 11-ը): Ըստ ավանդության, Յայկ նահապետը Յայոց ձոր գավառում սպանել է բռնակալ Բելին ազատություն պարգևելով իր տոհմին ու հետնորդներին: Այդ հաղթությունը ենթադրաբար տեսի է ունեցել մ.թ.ա. 2492թ. օգոստոսի 11-ին: Օգոստոսյան տոնը հայերը կոչել են Նավասարդ, որ նշանակում է Նոր տարի:

18-րդ դարում, Սիմեոն Երեւանցի կաթողիկոսի օրոք, որպես Նոր տարվա սկիզբ՝ ընդունվեց հունվարի 1-ը (համապատասխանեցնելով քրիստոնեական մի շարք երկրներում ընդունված տարեսկզբի հետ), թեև նույնիսկ մինչեւ 19-րդ դ. կեսերը հայկական շատ գավառներում (Սյունիք, Արցախ, Ուտիք) Նոր տարին շարունակում էր տոնվել օգոստոսին: Միայն 20-րդ դարի սկզբներից համընդհանուր դարձավ հունվարի 1-ը, որպես տարվա սկիզբ, տոնելը: Նոր տարին սկսվում էր դեկտեմբերի 30-31-ին, ամանորյա խմորեղեն պատրաստելով: Խմորեղենի մեջ ամենագլխավոր դերը հատկացվում էր «Տարի» հացին, որը տափակ հաց էր՝ երեսը զարդարված ընկույզով, չամիչով, սերմերով ու պտուղներով, որոնք արտահայտում էին առատության գաղափարը: «Տարի» հացի մեջ սովորաբար դնում էին դրամ կամ ուլունք եւ այն բաժանում ընտանիքի անդամների թվով: Ում բաժնի մեջ ընկներ ուլունքը, ենթադրում էին, որ տան հաջողությունն ու բախտավորությունն այդ տարի նրա հետ է կապված: Մատենագիտական նյութերը վկայում են, որ հնում «Տարի» հացը 12 մասի է բաժանված եղել, իբրև 12 ամիսների խորհրդանշան: Տարեհացը կտրում էին մեծ հանդիսավորությամբ՝ Տարեմուտի գիշերը:

Նոր տարվա սեղանի այրտադիր խմորեղենն էր նաեւ գարան, որի երեսը զարդարում էին կենդանիների պատկերներով կամ տաճարների նկարներով, հաճախ մատով փոսիկներ անելով:

Գաթայից ու «Տարի»-ից բացի, Նոր տարվա համար թխում էին զանազան ձեւավոր հացեր՝ «Ասիլ-Բասիլներ», որոնք մարդակերպ էին եւ խորհրդանշում էին բնության մեռնող ու հարություն առնող աստվածնե-

րին՝ Նարին, Արա Գեղեցիկին, ապա նաեւ՝ բերքի ու բարիքի հովանավոր աստվածներին: Դրանցով կատարում էին բազմապիսի գուշակություններ: Երբեմն տղամարդուն նվիրված ծիսահացը քսակի ձեռով էին պատրաստում. եթե այն ուռչում էր, գուշակում էին հարստություն, եթե սմբում էր՝ հակառակը: Նույն ձեռով պատրաստում էին «ցորենի հորեր», «հյուսքեր», «սմբակներ», «կողո», «սղոց», «խոփի», «մատնոց», «կողպեր» եւ այլն:

Զեւավոր հացերով ոչ միայն գուշակություններ էին անում, այլև շնորհավորում էին միմյանց տոնը եւ դրանցով «կաղնդում» ջուրը. նոր տարվա նախորդ գիշերը ամբողջ Յայաստանում լայնորեն տարածված էր ջուրը կաղնդելու սովորությունը: Կես գիշերին կանայք եւ երիտասարդ տղամարդիկ իշնում էին գյուղի աղբյուրը եւ այն կաղնդում շաղ տալով նրա մեջ սերմեր, պտուղներ կամ թթվելով ծիսահացերը: Յավատում էին, որ ճիշտ կեսգիշերին ջրի տեղ աղբյուրից ոսկի է հոսում (մի պահ ընդամենը) եւ աշխատում էին հենց այդ պահին աղբյուրից ջուր բերել:

Յայաստանի գրեթե բոլոր շրջաններում քաջ հայտնի էր «Կախու», «Կախուկ» կամ «Գոտեկախի» սովորույթը, որն Արեւելյան Յայաստանում հայտնի էր նաեւ «ճլոլանք» անվամբ: Այս սովորույթի եռթյունն այն էր, որ երիտասարդ աղջիկներն ու պատանիները նոր տարվա նախորդ գիշերը փոքրիկ խմբերով տոպրակներ, գուլպաներ կամ կողովներ ուսած շրջում էին երդիկից երդիկ եւ դրանք չվանով երդիկից ցած իշեցնելով՝ բարեմարդանքի երգեր էին ասում ու շնորհավորում տնեցիներին: Տանտիկինը պարտավոր էր լցնել տոպրակը մրգով, չիր ու չամիչով, գաթայով: Ի տարբերություն Յայաստանի մյուս շրջանների, Արցախում եւ Սյունիքում գոտեկախի սովորույթը հայտնի էր հակառակ տարբերակով: Այստեղ ընդունված էր ընկույզի, չոր մրգերի ու եփած հավերի շարան պարտաստել, որ կոչվում էր «ճլոլունք» եւ հարազատների, ավելի հաճախ՝ խնամիների երդիկներից ցած իշեցնել: Նշանված աղջիկներն իրենց հերթին «ճլոլանք» էին իշեցնում նշանածի տան երդիկից եւ փախչում. Եթե տանեցիներից որեւէ մեկին հաջողվում էր բռնել հարսնացուին, ապա նա պարտավորվում էր մտնել փեսացուի տունը, հյուրասիրվել եւ նոր գնալ:

Յաջորդ օրը, հունվարի 1-ին, մեծերն այցելուն էին միմյանց եւ շնորհավորում խնձորով, ընկույզով ու նարինջով: Գյուղերում տան տղամարդիկ պարտադիր կերպով գնում էին շնորհավորելու քահանային եւ գյուղապետին, տանելով իրենց հետ միրգ ու ընպեիք: Շնորհավորում էին բոլորը բոլորին. քահանան իր հավատացյալներին, ծնողները՝ զավակներին, ուսուցիչներն աշակերտներին եւ հակառակը, զրքանչը՝ փեսային, սկեսուրը՝ հարսին, միայն մի քացառությամբ՝ ամուսինը կնոջը չէր շնորհավորում եւ նվեր չէր տալիս՝ անոր համարելով:

Հետաքրքիր է, որ Պոնտոսի շրջանում տանտերը մի ձիթենու ճյուղ

---

Էր կտրում բերում տում, այն՝ իբրեւ կաղանդի ծառ, զարդարում կաղիններով ու ընկույզներով, իսկ առավոտյան տանում էր Եկեղեցի՝ քահանային օրինել տալու: Կաղանդի ծառի այս օրինակը տոնածառի հայկական տարբերակը չէ՝ արդյոք, մանավանդ, որ հայերը ունեին ծառով տունը զարդարելու սովորույթը (Ծարգարդար-Ծաղկազարդ): Կամ հայոց Կաղանդ պապը աղերսներ չունի՝ Եվորպական Զմեռ պապի հետ, լինելով նրա ավելի վաղ օրինակը (մասնավորապես հիշենք բարեկենդամյան դիմակավորված, զվարճացնող անձերին կամ «Մեծ պապուկ»-ին):

Ընդհանրապես, Նոր տարվա սեղանին պարտադիր էին յոթ տեսակ միջոց եւ յոթ ճաշատեսակները:

Ամանորյա սովորույթների մի մասն անմիջականորեն կապվում է կրակի, ծառերի, ջրի պաշտամունքների հետ: Յայաստանի որոշ շրջաններում ընդունված էր Կաղանդի հրիկունը տան կրակարանը կամ օջախը կաղնրելու սովորությունը: Գերանը, որը վառում էին Նոր տարվա նախորդ հրիկունը, կոչվում էր Տարենտի քյոթուկ (Լոռիում), որի առկայօնող կտորները հետո թաղում էին հանդերում, որպեսզի ապահովեին բերքի առատությունը եւ կանխեին կորուստը: Ավանդական սովորության համաձայն, Կաղանդի գիշերը շատերի տներում ճրագ էր վառվում «տան խերն ու պետքերը չփախչելու համար»:

## ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ

Յայոց մեջ Եկեղեցական սրբերի հիշատակին (Սք. Սարգիս, Սք. Գեւորգ) նվիրված տոներից, թերեւս, ամենամեծ շուքով կատարվում էր Սք. Կարապետի տոնը, որի ակունքները պետք է փնտրել մեր հեթանոս անցյալուն: Ըստ Եկեղեցական օրացույցի, այն նշվում էր հունվարի 15-ին՝ Հովհաննես-Կարապետի (Հովհաննես Մկրտիչ) ծննդյան օրը:

Դեռ նախաքրիստոնեական ժամանակաշրջանում Տարոն աշխարհի հնագյան վայրը ուխտագնացության կենտրոն է եղել, որը, ինչպես վկայում է պատմիչ Հովհան Մամիկոնյանը, 4-րդ դարում՝ Հովհաննես Մկրտչի մասունքներն այնտեղ ամփոփելուց հետո, կապվել է վերջինիս անվան հետ: Սք. Կարապետը վերածվել է համահայկական սրբի, նրա կերպարը տեղ է գտել ժողովրդական էպոսում ու ասքերում:

Մարտի գնալուց առաջ Մամիկոննեից ասպետները ուխտի էին գնում Սք. Կարապետ՝ ստանալու նրա աջակցությունը թշնամուն հաղթելու համար: Մամիկոնյան քաջարի ասպետներն էլ, իրենց հերթին, վաճքի անձնուրաց պահապաններն էին. մեծամեծ զոհեր էին մատուցում Սք. Կարապետին, վերակառուցում էին վաճքը, երբ այն տուժում էր երկրաշարժերից, խստորեն պատժում էին վաճքը թալանողներին եւ կալվածքներ նվիրում Եկեղեցուն: Սրբի այդ ռազմական, հերոսապահապան էռթյունը շարունակվում է հետագա դարերում եւս, երբ քաջ ֆիդայիններին մարտի գնալուց առաջ մաղթում էին՝ «Մշո սուլթան Սք. Կարապետ թող լինի ձեզ պահպան»...

Դարեր շարունակ Եկեղեցին ամրագրել է սրբի մեկ այլ էռթյուն եւս՝ նրա կնատյաց լինելը (պատճառը՝ Հովհաննես Մկրտչի գլխատումն է կնոջ քմահաճույքի պատճառով) եւ խստորեն արգելել կանանց ու աղջիկների այցը նրա գերեզմանին, արգելք դրել նաև նրանց Եկեղեցի մտնելու վրա: Պահպանվել են առասպելներ, որ Սք. Կարապետի վաճքը մտած ու նրա գերեզմանին այցելած կանայք կամ աղջիկները սրբի կողմից պատվել են: Հովհան Մամիկոնյանը հիշատակում է հայոց նախարարներից մեկի կնոջ՝ Մարիամի մահը (որն, ի դեպ, շատ բարեպաշտ ու կրոնասեր անձնավորություն է եղել): Նա պատժվում է սրբի կողմից, քանզի խախտել էր արգելքն ու մտել Եկեղեցի, թեև մեծ զոհեր էր մատուցել ու նվերներ տվել վաճքին:

Տոնի օրը, Յայաստանի զանազան վայրերից ժողովուրդն ուխտի էր գալիս Սք. Կարապետի վաճքը: Առաջներում շատերը յոթ տարի պաս էին պահում, որից հետո ուխտի գնալով Մշո Սք. Կարապետ, երկրագում էին Հովհաննես Մկրտչի գերեզմանին, որ իրենց սրտերի խորհուրդն ու խնդրանքները կատարի: Շատերն էլ խնդրում էին, որ իրենց «օխտը գոմ-

---

շի ոյժ տայ», ոմանք էլ՝ լարախաղացություն էին խնդրում, նվագելու ու բանաստեղծելու տաղանդ, ցավերին փարատություն եւ այլն: Անզավակ ծնողները գոտիները դնում էին գերեզմանաքարի վրա, ջերմեռանդորեն աղոթում, որ իրենց զավակ պարզեւի: Ուխտում էին, երեխայի ծնվելու օրվանից նրա մազերն այնքան ժամանակ չկտրել, միշեւ որ ուխտի չգնային Սր. Կարապետի գերեզմանին, ապա այնտեղ՝ գերեզմանի վրա էլ կտրում էին: Սրին խնդրում էին, որ իրենց զավակներին խելք ու շնորհը տա, որպեսզի իրենց մահվանից հետո՝ օջախները ծխացնեն ու վառ պահեն:

Տոնի օրը ժողովուրդը մեծ տոնախմբություն էր կատարում. անցկացվում էին խաղեր, մրցույթներ, ներկայացումներ (տոնին Մշո Սր. Կարապետ էին գալիս անզամ Հայաստանի ամենահեռավոր Վայրերից), որոնց գագաթնակետը դառնում էին աշուղների մրցությունները: Դրանց ժամանակ ցուցադրվում էին աշուղական վարպետությունը, սրամտությունը, տաղանդն ու պերճախտությունը:

...Վաղուց, շատ վաղուց չեն բացվել Սր. Կարապետի դռները, Տարոն աշխարհը վաղուց սպասում է իր օրինական տերերին, ու երանի՝ այն օրը, երբ հազարամյակներից եկող Իննակյան մեհյանների լույսը մեզ կառաջնորդի դեպի Ավետյաց երկիր ու Մամիկոնյան ասպետների աճյունները հավիտենական հանգստություն կստանան:

## ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ

Սր. Սարգսի տոնը, թեեւ չի նշվել մեծ շուքով ու հանդիսություններով, բայց եղել ու շարունակում է մնալ հայոց ամենասիրված տոներից մեկը:

Առաջավորաց Բարեկենդանը Զատիկից տաս շաբաթ առաջ հանդիպած կիրակին է, որին հաջորդող յոթնյակի հինգ օրը Առաջավորաց պաս է կոչվում եւ ծոնի հետ միասին՝ խիստ պաս է պահվում: Այդ յոթնյակի շաբաթ օրը տոնվում է Սր. Սարգսի հիշատակը եւ ժողովուրդն էլ շատ անգամ այդ պասը կոչում է Սր. Սարգսի պաս:

Յայլական ավանդությունների մեջ ծիավոր սրբերը շատ են. Սր. Սարգիս՝ ճերմակ ծիավոր է, Գեւորգը՝ տեգավոր, Թորոսը կամ Թեղողորսը՝ նախշուն ծիուն նստած: Սր. Սարգիսը Երիտասարդության հովանավորն ու սիրո ճակատագիրը որոշողն է, եւ այդ է պատճառը, որ տոնի բոլոր ծիսական արարողություններն ուղղված են նրան սիրաշահելուն ու նրա բարյացկամությունը վայելելուն:

Պասի օրերին արգելվում էր գլուխը լվանալ ու լվացք անել, աղջկներն ու Երիտասարդները հինգ օր հրաժարվում էին սովորական կերակրից, գոհանալով չոր հացով, որն ուտում էին արեւամուտից հետո: Միայն նման ժուժկալությամբ կարելի էր արժանանալ սրբի բարեգրությանը: Մի շաբաթ շարունակ, բացի պաս պահելուց, Երիտասարդների խոսակցության առարկան Սր. Սարգիսն էր: Տարիքավոր կանայք՝ նայրերն ու տատերը պատմում էին, թե ինչպես էին իրենք տարիներ առաջ մասնակցել Սր. Սարգսի տոնին: Պասի ուրբաթ օրը Յայաստանի բոլոր շրջաններում բուված ցորենը երկանքով աղում էին, փոխինդ պատրաստում ու շաղելով խաղողահյութով, ճաշակում: Երեկոյան երեխաները խնբեր էին կազմուն եւ գնում տնետուն, բարձրանում կտուրներն ու երգեր երգում դիմացը նվերներ ստանալով: Ուրբաթ օրը պասի վերջին օրն էր եւ հարսնացու աղջիկ ունեցող նայրերն այդ գիշեր հատուկ երգեր էին երգում:

Այդ գիշեր Երիտասարդները, հատկապես աղջկները, աղի բլիթ էին ուտում, որպեսզի երազ տեսնեն: Նրանք հավատում էին, որ Սր. Սարգիսն այդ գիշեր որոշում է իրենց բախտը եւ նա, ով երազում ջուր տա խնելու, լինելու է իրենց ապագա զուգընկերը: Այդ նույն գիշերը, երբ բոլորը քնում էին, տանտիրուիին դրան ետեւում կամ տան կտուրին ամանով չոր փոխինդ էր դնում եւ աղոթում. «Մեռնիմ քի, ատենահաս բոզ ծիավոր, Սրբ Սարգիս, դու իգաս, քու ծիու ոտ զարկիս մեջ»: Յավատում էին, թե այդ գիշեր Սր. Սարգիսն սպիտակ ծիու վրա նստած փախցնում է իր հարսնացուին մի ուռումի աղջիկ: Ծոպերով զարդարված նիզակը ձեռքին, յափնջին ուսին, նա շրջում է ողջ Յայաստանով մեկ. «Նրա ծիու պնչերից

ամպեր են ցայտում եւ փաթիլ-փաթիլ ձյուն անում, ուսների տրոփյունից աշխարհը թնդում, նիզակի խաղացնելուց սաստիկ բուք բարձրանում»: Նա այցելում է բոլոր հայերի տները՝ փոխինդը նայելու: Փոխինդը տեսնելով եւ գոհանալով, որ պահել են իր պասը, Սր. Սարգիսը հրամայում է ձիուն՝ փոխինդի մեջ թողնել պայտի հետքը (որը երազանքների իրականացման խորհրդանշ էր դիտվում): Տանտիրուիհն այս փոխինդից հետո խաչիլ էր եփում, որ ճաշակում էին տան բոլոր անդամները:

Շաբաթ առավոտյան տեղի էր ումենում «աղջիկ ժողվրտանքը», երբ հարսնացու աղջիկները հավաքվում էին որեւէ տեղ, միմյանց շնորհավորում, պատմում ու մեկնաբանում տեսած երազները: Դրանից հետո սկսվում էր հացերույթը: Դա հարսնացու աղջիկների ուրախությունն էր, նրանց հանգստի տոնը, որ տեւում էր մինչեւ երեկո: Նրանք պարում էին, երգում, կատակում: Փեսացու տղաներն այդ օրը աշխատում էին գոնվել աղջիկների հավաքատեղիին մոտ: Երիտասարդներից յուրաքանչյուրը ցանկանում էր տեսնել իր հարսնացուին, հանդիպել հավանած աղջկան, քանզի մեծերը, Սր. Սարգսի տոնին, մեղմորեն էին վերաբերում այդ հանդիպումներին:

Այդ օրը աղջիկներն ու տղաները բարձրանում էին տան կտուրը եւ փոխինդի գնդիկ կամ հաց դնելով սպասում, թե թռչունն ու՞՞ կտանի այն: Եթե տաներ ուրիշի տունը եւ սկսեր կտցել, ուրեմն՝ այնտեղից էլ հարս կամ փեսա կլիներ: Նրանք ժամերով սպասում էին, մինչեւ որ թռչունը տաներ հացն ու փոխինդը: Այսպես էլ ավարտվում էր Սր. Սարգսի տոնը:

Ըստ Ս.Աբեղյանի, Սր. Սարգիսը հողմի անձնավորումն է եւ քամու հին աստվածության ներկայացուցիչը: Նրա հողմային բնույթը երեւում է մի քանի սովորույթներից ու զրույցներից: Պասի ժամանակ շատ մարդիկ պոկում էին իրենց մազերը եւ աղոթելով հանձնում քամուն, հավատալով, թե սուրբը իրենց մազերի հետ կտանի նաեւ իրենց ցավերը: Հավատում էին նաեւ, որ Սր. Սարգիսն իր բքով կարող էր խեղբել մարդկանց, բայց ոչ հայերին, այլ հույներին ու վրացիներին, որոնք իրեն իրեւ սրբի, չեն ճանաչում:

Նրա բարեգրությանը արժանանալու համար, չամուսնացած երիտասարդ մարդիկ, հատկապես աղջիկները, շատակեր չափութ է լինեին, որպեսզի Սր. Սարգիսը իրենց հարսանիքին բուք չբարձրացներ՝ սրանումն է տոնի՝ չափավորության ու ժուժկալության կոչող խորհուրդը:

Իբրև հողմի ոգի, Սր. Սարգիսը նաեւ գայլերի ու կենդանակերան ոգիների տիրակալ էր պատկերացվում:

Ժողովրդի պատկերացմանը, Սր. Սարգիսն ունի գեղեցիկ կերպարանք, նիզակ, ոսկե սաղավարտ ու ոսկե սպառազինություն. մտքի պես արագ հայտնվում է նա իր լուսաշող ձիով, երբ նեղության մեջ՝ նրան են կանչում:

## ՏՐՆԴԵԶ

Հեթանոսական Հայաստանում այս տոնը նվիրված էր Միհր աստ-ժուն եւ անմիջականորեն կապվում էր կրակի պաշտամունքի հետ (ըստ Ս. Օրմանյանի, տոնը նվիրված է եղել Տիր աստծուն - խմբ.): Տոնի գլխավոր նապատակն էր կրակի միջոցով ազդել սառնամանիքների վրա եւ հճայա-կան ճանապարհով ուժեղացնել, զորացնել արեւի ջերմությունը: Համե-մատարար ավելի ուշ, տոնի մեջ ձեւավորվում եւ խորանում են կրակի մի-ջոցով բազմապահի գուշակություններ անելու սովորույթները՝ կապված ցանքի ու բերքածի, տնտեսական տարվա հաջողության, սերնդածության գաղափարների հետ, որոնց վառ վկայությունը տոնական ուտեստում հա-տիկների եւ հատիկավոր կերակրատեսակների բացարձակ գերակշռու-թյունն է եւ, ընդհանրապես, տոնական համակարգում նորահարսի ու նո-րափեսայի խաղացած դերը:

Ըստ Եկեղեցական ավանդության, տոնը կապվում է Տիրոջ ծննդից 40 օր հետո նրան կրակներով ընդհարաց գնալու գաղափարին (Հայ Եկե-ղեցին այն տոնում է ստույգ փետրվարի 14-ին՝ հունվարի 6-ից 40 օր հե-տո - խմբ.), որից էլ ծագում է տոնի Եկեղեցական անվանումը՝ «Տյառնըն-դառաց»:

Տրնդեզը տոնվում էր մեծ շուքով ու համոխավորությամբ: Այդ նա-սին այսպես է նշում Գ. Սրվանձտյանը. «Հայաստանի համար ընդհանուր էր այս տօնի վսեմութիւնը. Կաղանդին կամ տարեգլխոյն այնքան հանդի-սաւոր չէ, որքան այսօր...»: Հայաստանի բոլոր շրջաններում այն գրեթե նույնությամբ է կատարվել եւ ունեցել է իր տեղական անվանումը:

Տրնդեզի օրը, վաղ առավոտյան մեծահասակ կանայք Եկեղեցուց վերադառնալուց հետո փոխինդ էին շաղախում կաթով կամ ջրով եւ շա-քարով, պատրաստում փոքրիկ գլանիկներ ու բաժանում տնեցիներին (փոխինդի գնդեր, «դումբրուկ» եւ այլն): Այդ օրը պարտադիր կերպով փո-խայցելություններ էին կատարում խնամիները. նոր նշանած տղա ունե-ցող ընտանիքն այցելում էր հարսնացուի տուն, իսկ նորահարս ունեցող ընտանիքին այցելում էին հարսի հարազատները, տանելով իրենց հետ նվերներ, ընկույզ, չամիչ, աղանձ եւ փոխինդի գնդեր: Կեսօրից հետո վե-րոհիշյալ ընտանիքներն իրենց բակում խարույկ էին վառում: Որպես կա-նոն, խարույկի դեզը պատրաստում էին նորափեսաները:

Քավորկնոց, սկեսուրի եւ տալերի ուղեկցությանը նորահարսին բակ էին իջեցնում եւ խարույկի շուրջն սկսվում էր շուրջպարը: Երբ կրա-կը փոքրինց մեղմանում էր, սկսվում էին կրակրուկները: Կրակի վրայից առաջինը թռչելու իրավունքը վերապահվում էր նորահարսին: Պտղավոր-վելու ակնկալությամբ խարույկի վրայից թռչում էին նաեւ ամուլ կանայք՝

այրելով իրենց զգեստի քղանցքը, ապա թռչում էին երիտասարդները, տղանարդիկ՝ «ցաւ ու չօրից» ազատվելու համար, իսկ վերջում՝ երեխաները:

Տրնդեզի օրը բոլոր տներում պարտադիր պատրաստում էին հացահատիկներից բաղկացած կերակրատեսակներ՝ խաշիլ, փոխինդ, աղանձ: Այդ օրը խնամիների միջեւ աղանձափոխանակություն էր կատարվում:

Տոնի ծխական համակարգը լրացնում են բազմապիսի գուշակությունները, որոնք, ինչպես վերը նշվեց, կապվում են բնության զարթոնքի, ցանքի հաջողության, սիրո եւ ամուսնության, պտղաբերության խորհուրդների հետ: Այսպես, օր՝ երիտասարդ տղաներն ու աղջիկները փոխինդի գներից մի կտոր դնում էին երդիկին, ծառի ծյուղին կամ ցանկապատի ծայրին եւ ուշադիր հետեւում, թե աղավնին կամ ագռավը դեպի որ կողմն է տանում այն, ենթադրելով, որ համապատասխան կողմից էլ հարս են բերելու կամ փեսացու է զալու եւ այլն:

Գուշակությունների մեջ մասն անմիջականորեն կապվում էր խառույկի ծխի հետ: Յավատում էին, թե ծուխը դեպի որ կողմը թեքվեր, այդ կողմի արտերն առաջիկա տարում առատ բերը կտային: Ընդհանրապես, եթե ծուխը հարավ եւ արեւելք էր թեքվում այդ տարի հասկը լավ էր լինում, իսկ եթե հյուսիս եւ արեւմուտք վատ: Այս գուշակությունն իր հիմքում իրական իմաստ ուներ՝ կապված փետրվարի կեսերին հյուսիսային ու հարավային քամիների փոխազդեցության կամ որեւէ մեկի գերակշռության հետ:

Կասպուրականում գուշակություններ էին անում նաեւ տոնի օրը ծնված երեխաների վերաբերյալ: Յավատում էին, որ Տրնդեզի երեկոյան ծնված երեխան շատ չար ու կրակոտ է լինելու, որովհետեւ կրակի հետ է ծնվում: Այստեղ խարույկի վրայից ցատկելը մեկնում էին որպես գայլ ու զազանից, օձ ու կարիճից չվնասվելու միջոց:

Ինչպես տեսնում ենք, փոխելով տոնի անվանումը, եկեղեցին այնուամենայնիվ չի կարողացել ազդել նրա բուն եռթյան, բովանդակության վրա: Նա կամովին կամ ստիպված ընդունել է կրակ վառելու, կրակի շուրջը պտտվելու, վրայից թռչելու եւ այլ հեթանոսական սովորութները: Այսպիսով, Տրնդեզը եղել եւ մնում է ազգային, բնապաշտական տոն:

## ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ԵՎ ՄԵԾ ՊԱՍ

Բուն Բարեկենդանը Յայոց հնագույն տոններից է, որը Յայ Եկեղեցու սահմանած բարեկենդաններից (Առաջավորաց, Վարդավառի, Խաչի եւ այլն) գլխավորն է եւ տոնվում է Զատիկից յոթ շաբաթ առաջ: Յնում Բուն Բարեկենդանին թույլատրովում էր առատ ուտելիք, կերուխում, տանտիկիններն իրենց պահած մթերքներով շռայլորեն հյուրասիրում էին ընտանիքի անդամներին եւ հյուրերին: Տնին պատրաստվում եւ մասնակցում էին բոլորը՝ մեծ, թե փոքր: Չնայած ամենուր դեռ ձյուն էր, սակայն դա չէր խանգարում, որ մարդիկ անձնատուր լինեն զվարճություններին: Երկու-երեք օր առաջ կանայք եւ տղանարդիկ դադարում էին աշխատել, զանազան խաղեր էին խաղում, զվարճանում երեխաների պես: Ծերունինները, առանց քաշվելու միանում էին այս կամ այն խմբին՝ «քօփ» խաղալու: Երիտասարդները «սուրմագիլի» կամ «կունդի» էին խաղում: Աղջիկներն առանձին խումբ էին կազմում եւ ճլորթի ընկույտ: Այդ ամենը զուգորդվում էր ինքնատիպ զրոսախնջույքներով, դափ ու զուռնով:

Տնի անբաժան նաև էին ժողովրդական ներկայացումներն ու դիմակավոր խաղերը (առհասարակ, դեռ հնագույն ժամանակներում, տոնախմբությունների, թատրոնական ներկայացումների կամ որսորդության ընթացքում հայերը դիմակ հագնելու սովորություն ունեին): Ներկայացումների ժամանակ ծիծաղախառն կատակներով քննադատության էին ենթարկվում մեծավորներն ու իշխանավորները: Յավարվում էին մեծ ու փոքր, մի կողմ էին դրվում պետական կամ Եկեղեցական օրենքները, ամեն մարդ առանց քաշվելու ասում էր իր խոսքը: Փաստորեն, Բուն Բարեկենդանը բացի խրախճանքից, կեր ու խումից, նաև ազատության օր էր:

Բարեկենդանի օրը մինչեւ իսկ չքավորներն ու աղքատներն էին վայելում տոնական սեղանը: Այդ օրը հիշում էին նաև պանդխսության մեջ գտնվողներին ու երգում էին պանդխսության հատուկ տաղեր:

Բարեկենդանի երեկոն բարեկամներն ու հարազատները միասին էին անցկացնում: Յուրաքանչյուրն իր հետ ուտելիք էր բերում, կուշտ ուտում էին ու խմում, քանզի առջեւում յոթշաբաթյա պասն էր: Ամենավերջում ուտում էին մի-մի ձուլ բերանը «կողակելու» համար, որպեսզի Զատիկին դարձյալ ձվով «բանան» այն:

Բարեկենդանի օրը վաճքերում կոչվում էր նաև Աբեղաթող: Ստ. Մալխասյանցի ստուգաբանությանը՝ բառը կազմված է «աբեղա» եւ «քողուլ» (քողնել, արձակել) բառերից եւ նշանակում է աբեղաների թողություն, արձակում վաճական խստ կյանքի կանոններից: Ազգային հինավորց տոնը այդպես է կոչվել քրիստոնեության հաստատումից հետո, որով Յայ Եկեղեցին խստակենցաղ հոգեւորականների համար սահմանել է

որոշ ազատություններ: Այստեղ եւս մուտք են գործել բարեկենդանյան խաղերն ու խրախճանքները:

Լինելով շարժական, տոնը կատարվում էր փետրվարին կամ մարտի սկզբին եւ, հավանաբար, կապ ուներ գարնան սկսվելու հետ: Եւ պատահական չէին զվարճությունները, որոնք արթնացող բնությանը ուրախ դիմավորելու, գարնան հետ՝ նաեւ մարդկանց վերակենդանանալու խորհուրդը ունեին: Ու մարդիկ մաղթում էին միմյանց՝ բարի կենդանություն...

\* \* \*

Բուն Բարեկենդանին հաջորդում է ՄԵԾ ՊԱՍԸ, որը պահվում է մինչեւ Զատիկի: Մեծ է կոչվում պասերից ամենաերկարը լինելու համար. այն տեսում է քառասուն օր, ուստի կոչվում է նաեւ Քառասնորդական (քառասնորդական պահը Եկեղեցին սահմանեց ի հիշատակ Քրիստոսի քառասուն օր անապատում առանձնանալուն, որոնք նա անցկացրեց աղոթելով, ծոնապահությամբ եւ ապաշխարհությամբ), ժամանակին անվանվել է նաեւ Աղ ու Յաց (նախկինում Մեծ Պասի որոշ օրերին միայն աղ ու հաց էին ուտում կամ ծոմը ավարտում էին աղ ու հացով): Մեծ կամ Քառասնորյա պասը բացի կարնեղենից, մսեղենից, ձկնեղենից, ձվից հրաժարվելուց, նաեւ ինքնաքննության, զղջումի, ապաշխարհության, հոգեւոր դաստիարակության ու քողության մի յուրօրինակ շրջան է:

Մեծ Պասը ունեցել է եւ կարեւոր առողջապահական ինաստավորում. անմիջապես Բարեկենդանին հաջորդելով, երբ մարդիկ օրերն անց էին կացնում ճոյի կերուխումերով, օգտագործելով օրգանիզմի համար դժվարանարս կերակուրներ, այն սահմանում էր պահեցողության կանոններ, որպեսզի տարվա մեջ մի որոշակի շրջան յուրաքանչյուրը պարտադրված լիներ հրաժարվելու ճարպային ուտելիքներից:

Ժամանակին Մեծ Պասը պահվում էր մեծ երկյուղածությամբ, խստապահանջությամբ ու ցերմեռանդությամբ: Այդ օրերին ամուսնություններ տեղի չէին ունենում, թույլատրվում էր միայն մկրտություն եւ նշանդրեք: Բացի Եկեղեցական կանոններից, գոյություն ունեին նաեւ ժողովրդական խիստ սովորություններ, որոնք նույնիսկ երեխաներին արգելում էին լուծել կամ խախտել պասը:

Յայաստանի գրեթե բոլոր շրջաններում Մեծ Պասն սկսում էին Ակլատիզի կամ Ախլոնի պատրաստումով, որն ուներ հետեւյալ տեսքը. Վերցնում էին մեկ կարտոֆիլ կամ սոխ, կամ խմորից տիկնիկ էին պատրաստում եւ վրան ամրացնում յոթ փետուր, չորսը՝ սպիտակ, երեքը՝ սեւ (սպիտակ փետուրները խորհրդանշում էին ձմռան ծյունը, սեւերը՝ գարնան օրերը, երբ երկիրը երեւում է սեւ հողով ու կանաչով): Այդ յոթ փետուրները խորհրդանշում էին Մեծ Պասի յոթ շաբաթները, որոնք տանտիկինը յուրաքանչյուր շաբաթը լրանալուց հետո, հերթով պոկում էր: Ակլատիզը կա-

խում էին թռնրատանը կամ երդիկից, նրա վրա ամրացնում էին նաեւ մանրիկ քարեր ու կարմիր պղպեղ. ով պասը լուծեր, քարերը կարող էին ընկնել նրա գլխին, իսկ պղպեղը՝ կայուր բերանը: Ըստ ավանդության, ՄեծՊասի վերջին օրը Ակլատիզը թռչուն էր դառնում եւ հեռանում՝ նորից գալու իրավունքով:

Նախիջեւանցիները Մեծ Պասն անվանում էին Աղացք, աղ ու հաց, ուստում էին միայն բանջար, աղցան, խաշիլ:

Մեծ Պասի կեսը կոչվում է Միջինք, իիշեցնելով, որ պասը հասել է իր կեսին: Այդ օրը մի-մի հատ բաղադր էին թխում՝ Միջունք, մեջը դնում ուլունք կամ դրամ եւ բաժանում տան բոլոր անդամներին. բաժին էր հանվում նաեւ անասուններին, հողին: Ուլունքը կամ դրամը ում բաժնից որ դուրս գար, այդ տարվա առատությունն ու հաջողությունները նրանն էին: Մեծ Պասը լուծվում էր Զատիկին եւ բացվում ձվով ու ձկնեղենով:

Ինչպես Ավետարանն է պատվիրում. «Ուստողը թող չանգոսնի չուտողին եւ փոխադարձաբար չուտողն էլ թող չքննադատի ուստողին: Թող յուրաքանչյուր ոք իր միտքը հաճեցնի»:

Եւ որ գլխավորն է ու Մեծ Պասի կարեւոր խորհուրդը՝ առանց ինքնաքննության, զղջումի ու առաքինի գործերի, պահեցողությունը արժեք չի կարող ներկայացնել:

## ԾԱՂԿԱԶԱՐԴ

Ծաղկազարդը (Ծառզարդար) Մեծ Պասի նախավերջին կիրակնօրյա տոնն է (Զատկից մեկ շաբաթ առաջ), որի ակունքները գալիս են նախաքրիստոնեական հեռավոր ժամանակներից: Տոնի ծիսական արարողությունների մեջ մասը նվիրված է գարնան զարթոնքին, եւ, պատահական չէ, որ այդ օրը Եկեղեցում կարդացվող «Երգ Երգոցի» մի հատվածը ամբողջությամբ բնության գովքն է անում. «Զի ահա ձմեռն անց, անձրեւք անցին եւ գնացեալ մեկնեցան, ծաղկիք երեւեցան յերկի մերում...»:

Գարնանը բնությունն սկսում է ծաղկել, փթթել եւ արգասավորվել, հետեւաբար, ծաղկների առատության երեւալու հետ է կապված տոնի Ծաղկազարդ անվանումը: Մյուս՝ ժողովողական տարրերակը՝ Ծառզարդար (ծառով զարդարված կամ ծառը զարդարել), դարձյալ գարնան զալուստն է խորհրդանշում, երբ, ի նշան դրա, մարդիկ ուղենու կամ ձիթենու օրինված ճյուղերով զարդարում էին իրենց տունն ու բակը, անասուններին: Դետո այդ ոստերը խնամքով պահում էին ու գործածում՝ որպես պահպանակ մրրիկի եւ փոթորկի ժամանակ, նաեւ այրում էին ու մոխիրը քամուն տալիս՝ փորձանքից զերծ մնալու համար: Ժողովուրդը օրինված ոստերի մեջ խորհրդավոր մի ուժ էր տեսնում, որի միջոցով կարող էր պաշտպանվել բնության արհավիրքներից, որոնք կարող էին ոչնչացնել հունձքը, այգին, պտղատու ծառերը:

Անցյալուն Ծաղկազարդի տոնին սովորություն էր Եկեղեցում ծառ զարդարելը, ինչպես նաեւ նրա ծյուղերից պտուղներ կախելը, որը ոչ միայն արտահայտում է տոնի Ծառզարդար անվանումը, այլև աղերսներ ունի պտղաբերության պաշտամունքի հետ (պտղուղներ կախելը):

Մաղաքիա արք. Օրմանյանի Վկայությամբ, «Այդ անունով (Ծաղկազարդ-Ա.Ս.) կրչում ենք Քրիստոսի Երուսաղեմ գալու տոնը, որը Զատկից մի շաբաթ առաջ է կատարվում, եւ սակայն ո՞չ ավետարանական պատմության, ո՞չ ավանդական հիշատակության եւ ո՞չ էլ օրվա արարողության մեջ ծաղկի խոսք չկա: Ուրիշ ազգերի մեջ էլ այդ իմաստով բան չկա, հետեւաբար, Ծաղկազարդ անունը գուտ հայերեն լինելով, տոնական կամ քրիստոնեական ծագում էլ չունի: Իրավացի կլինի Ենթադրել, թե Ծաղկազարդը Վարդավառ անվան ննան իին ու հերանոսական տոն է հայերի նոտ, որը ժամանակների եւ պարագաների ննանությամբ Երուսաղեմ գալու տոնին խառնվեց եւ մեկի անունը մյուսին տրվեց»:

Ծաղկազարդը նաեւ երիտասարդության տոն է: Այդ մասին վկայում են տոնին կատարվող սովորությունները: Այդ օրն աղջիկներն ու տղաները հագնում էին իրենց ամենագեղեցիկ ու թանկարժեք զգեստները, աղջիկները նաեւ եղունգները հինա էին դնում: Նշանված տղաները

արմատախիլ էին անուն մատաղ ուռենին եւ ճյուղերը զարդարում գույնգգույն լաքի կտորներով, թելի վրա շարված չանչահատիկներով, մրգերով եւ եռասայր մոմերով (ինչպես տեսնում ենք, ժողովրդական այս արարողությունը եւս բացատրում է տոնի Ծառզարդար անվանումը՝ ծառը զարդարել):

Մինչեւ կեսգիշեր, փոքր-ինչ քնելուց հետո, երիտասարդները եկեղեցի էին շտապում: Առաջինը տեղ հասնողը խփում էր զանգը, մյուսները գնում էին քահանային արթնացնելու: Նշանված տղաները զարդարված ծառերով կանգնում էին իրենց հարսնացուների առաջ: Մերձավոր կանանցից մեկը ծառի վրա նի եռասայր մոն էր վառում ու ընծաներ տալիս նշանվածներին: Ժամերգությունը ձգվում էր գրեթե մինչեւ լուսարաց, խլանալով ճռօճռօանների ու չըխչըխկանների աղմուկով, որ երեխանները պատրաստում էին հատկապես այդ օրվա համար: Առավոտյան, ծառերն օրինելուց հետո, ժողովուրդը՝ գերազանցապես երիտասարդներ, ծառերից մեկական ճյուղ պոկելով, տուն էին տանում, այն տնկում հողի մեջ, որ արմատ տա, կամ կախում էին խնոցուց: Այն գցում էին նաեւ կրակը, որպեսզի կաթը եռացնելիս չմակարդվի:

Այդ գիշեր, հաճախ, նախնական համաձայնությամբ, նոր գույգերի նշանադրություն էր կատարվում: Եկեղեցում տղայի մայրը ընտրած աղջկա մատին մատանի էր դնում, գլխին՝ գլխաշոր գցում, որից հետո վերջինս նշանված էր համարվում: Այս սովորություններն, անշուշտ, կապ ունեին տոնի խորհրդի ու իմաստի հետ. այլաբանորեն այդ բոլորը առնչվում էին բնության ծաղկումի, արգասավորման հետ՝ կատարվելով հատկապես գարնանը:

Տոնի օրը պատամիները ճռօճռօան ու կարկաչա հարելով, երգելով ման էին զալիս տնետուն եւ Զատկի համար ձու հավաքում: Լեռնային Ղարաբաղի որոշ գյուղերում կանայք մոմերով գնում էին գերեզմանատուն եւ այլպիս մոմերն ամրացնում իրենց հանգուցյալների գերեզմանաքարերին. ողջ գերեզմանոցը փայլփլում էր կրակներից:

Ծաղկազարդին, չնայած պաս էր, պատրաստվում էին անուշեղեններ՝ նազուկ, փախլավա, ուրիշ թևվածքներ ու համեղ կերակուրներ:

Արտակ արք. Մանուկյանը ցավով նկատում է, որ «Ծաղկազարդի տոնակատարութեան իին սովորոյթները, տոնախմբութիւնները, յատկապես գարնանային եղանակի պաշտամունքը դարերի ընթացքին մոռացուեցին, եւ այժմ այդ բոլորից մնաց միայն գեղեցիկ բառը՝ Ծաղկազարդ, որպես բացահայտիչ հին-հին տոնախմբութիւնների»:

Ծաղկազարդ-Ծառզարդարի մերօրյա խորհուրդը դարձյալ գարունը դիմավորելու մեջ է, որը կարելի է ուղեկցել զանգվածային ծառատմնկումներով և նշանավորել երիտասարդների երջանիկ ու արգասաբեր միություններով:

## ԶԱՏԻԿ

Յայոց տոների շարքում Զատիկը բնության զարթոնքը խորհրդանշող ամենասպասված ու ամենամեծ տոնն է, որը եկեղեցական օրացույցով (325թ. Նիկայի տիեզերաժողովի որոշմամբ) կատարվում է գարնան գիշերահավասարից եւ լուսնի լրումից հետո եկող առաջին կիրակին։ Այն շարժվում է 35 օրերի միջեւ՝ մարտի 22-ից մինչեւ ապրիլի 25-ը։ Զատիկի տոնը կատարվում էր ճոխ հանդիսությամբ եւ մեծ կազմակերպվածությամբ։ Եվ հավանաբար այս էր պատճառը, որ, ի տարբերություն մի շարք այլ տոների, այն նույնությամբ էր կատարվում Յայտանի գրեթե բոլոր շրջաններում եւ ամենուր հայտնի էր միեւնույն անվանումով՝ «Զատիկ», «Մեծ Զատիկ», «ճոխ Զատիկ» եւ այլն։

Զատիկի բարին տրվում են տարբեր ստուգաբանություններ։ Որոշ ուսումնասիրողներ այն նմանեցնում են հրեաների Պասեթի հետ (Պասեթը, որ նշանակում է ելք, հրեաների ամենասիրված տոնն է եւ խորհրդանշում է Եգիպտոսից դեպի Ավետյաց Երկիր նորանց ելքը)։

Ստ. Մալխասյանցը Զատիկի բառը ստուգաբանում է որպես տոն, ուրախություն։ Յետաքրքիր է Թորգոն վարդապետի ստուգաբանությունը։ «Դիներեն ոմանք անոր մեջ կը տեսնեն ազատութիւն բարին արմատը եւ կը մեկնեն ազատիլ չարչարանքներէ. այլք՝ զատ ուրիշ բային արմատը եւ կը համեմատէն հրեական պասքային հետ, իբր զատում կամ անցք (ընդ Կարմիր ծովն)։ Նորերեն ոմանք, ընդունելով այս վերջին իմաստը, անոր մեջ կը տեսնեն ակնարկութիւն գիշերահաւասարին նուիրած տօնի մը, որ եղանակներու զատուելու ժամանակին կը պատահեր»։

Տոնի առաջին եւ ամենամեծ խորհուրդը բնության զարթոնքի, տարվա եղանակների զատվելու, որոշվելու, բաժանվելու գաղափարն է։

Զատվել բառն այստեղ խորհրդանշում է ոչ միայն տարվա եղանակների զատումը, այլ նաև բնության գույների զատումը, բաժանումն ու տարբերակումը համընդիանուր գորշությունից, միապաղաղությունից։ Այս ժամանակ է, որ հողը ծածկվում է գույներով, ծաղկում են ծիրանենիները, խնձորենիները, տանձենիները, դեղձենիները... Եվ ինչպես կարող էր երկրագործ ժողովուրդը իր երախտագիտությունն ու մեծարանքը չարտահայտել մայր բնությանը, նրա զարթոնքը չավետել տոնակատարությամբ ու զոհաբերություններով։ Այստեղից է՝ զատիկ բարի տոնն, ուրախություն իմաստը։ Եվ ուրախանում էր ու ուրախանում է ժողովուրդը՝ տոնելով բնության Մեծ Զատիկը, զոհաբերելով կարմիր, կանաչ, նարնջագույն, դեղին ծվերը, որոնք ցուցադրում էին զարնան գույների խաղը։ Ահա՝ թե ինչումն է նաև բազմագույն ծվերի ու ծվախաղերի խորհուրդը Զատիկի տոնին, մանավանդ, որ «միայն Զատիկին ենք ծու ներկում, որով-

հետեւ ձուն օրինակն է բոլոր աշխարհի, եւ ինչպես որ իմաստուններն ասում են՝ դրսի կեղեւն նմանում է երկնքին, մզղաձեւը՝ օդին եւ սպիտակուցը՝ ջրին, դեղինն էլ երկիրն է, այսինքն՝ մէջը» (Թորգոն Վարդապետ):

Ուշագրավ է, որ ձուն համարվում է կենաց ծառի, կյանքի խորհրդանիշ: Ստ. Մալխասյանցը նշում է, որ «ծառ» նշանակում է նաեւ «ձուի սուր ծայրերը»: Այս բացատրությունը, որ ցույց է տալիս ձվի եւ կենաց ծառի գաղափարական առնչությունները, վկայում է, որ զատկական ձուն իր մեջ պարունակում է կյանքի հավերժության խորհուրդը:

Եվ ուզում ենք հավատալ, որ մի ժամանակ Արարատում, բարձր լեռների կատարին բույն դրած Յազարան Յավը, «որ գիշերները ճառագում եր, իսկ ցերեկները կրեւի ճառագայթների հետ ձուլում իր շողերը, դյուրիչ ճայնով երգում եւ բազմագույն ձվեր ածում՝ անընդհատ նորոգելով Արարատի գույների բարմությունը» (Ս.Կակոսյան), դեռ ապրում է մեր լեռներում, որ ինչպես այն ժամանակներում, այժմ էլ Մայր Անահիտը դրանք շաղ է տալիս ողջ Արարատով մեկ, որպեսզի հողն էլ դրանց նման բազմագույն պտուղներ տա:

Զատիկի բառի մյուս մեկնաբանությունը ազատվել իմաստն ունի: Բացի վերոհիշյալ խորհրդից, այսինքն՝ ձմռան երկար թագավորությունից բնության ազատվելուց, հավանաբար, այն նշանակել է նաեւ Մեծ Պասը ավարտելու, դրա խստություններից ազատվելու իննաստը, երբ մարդիկ քառասնօրյա պատվ մարդագործելով մարմինն ու հոգին, վերջապես իրավունք են ստանում օգտվելու երկար սպասված, կենդանական ծագում ունեցող կերակուրներից: Այդ էր պատճառը, որ գրաններում մի-մի ձու դրած, նրանք գնում էին երեկոյան ժամերգության եւ այն ավարտվելուց անմիջապես հետո, ուստում ձուն:

Այդ էր նաեւ պատճառը, որ այս տոնին սպասում էին մեծ անհամբերությանք: Արդեն Զարչարանքի շաբաթվա (Մեծ Պասի վերջին շաբաթվա) սկզբից հայ ընտանիքներում սկսում էին Զատկի պատրաստություններ տեսնել: Երկուշաբթի սրբում, մաքրում էին տները, երեքշաբթի օրը, եթե կանայք Մեծ Պասի ընթացքում «հավաքս» էին ունենում, այսինքն մասուն կամ սեր էին հավաքած լինում, այդ օրն անշուշտ հարում էին: Ավագ շորեցաբթի օրվան «չիք չորեցաբթի» էին կոչում եւ ոչ մի գործ չէին անում, որպեսզի արածը չչքվի:

Շաբաթ օրը վաղ առավոտից պատանիներն սկսում էին ձու խաղալ: Մեծերը հաճախ ծոն էին պահում:

Նախատոնական ընթրիքը բաղկացած էր փլավից, տապակած բանջարից եւ ձկից:

Զատկի նախօրեին, երդիկից իջեցնում էին նաեւ Ակլատիզը, պոկում Մեծ Պասի վերջին շաբաթը խորհրդանշող փետուրը, շաբաթ երեկոյան պասը բացում ձվով, իսկ կիրակի օրը առավոտվանից արդեն սկսում

Զատկի ուրախ տոնակատարությունը, որը շարունակվում էր մինչեւ ուշ երեկո:

Զատկի տոնի գլխավոր բովանդակությունն էին կազմում նաեւ զանգվածային կամ ընտանեկան առանձին ուխտագնացությունները: Ուխտի էին գնում զանազան ուխտատեղիներ, հատկապես գյուղից դուրս գտնվող մոտակա սրբավայրեր (ի տարբերություն Վարդավառյան ուխտագնացությունների, երբ ավելի հեռու էին գնում՝ սարերը): Ուխտավորներն իրենց հետ տանում էին մատադացու գառ, գինի, անհամար ձվեր, բաղարջ հաց եւ կաթնեղեն:

Զատկական տոնի անբաժան մասն էր կազմում նախնիների պաշտամունքը, որը դրսեւորվում էր մահացած հարազատների գերեզմաններին այցելության գնալու, խնջույքներ կազմակերպելու եւ տոնական ուտելիքների մի մասը գերեզմանների վրա թողնելու սովորույթներում («մեռելափայ»): Այդ պաշտամունքի մնացորդներից են նաեւ Զատկին օր ու գիշեր սեղանը բաց պահելու, դրներն ու լուսամուտները չծածկելու ավանդական սովորույթները, որպեսզի մահացած նախնիներն ամեն ժամանակ կարողանան ելումուտ անել եւ օգտվել ընդհանուր հյուրասիրությունից:

Դայաստանի շատ շրջաններում այս կապակցությամբ նույնիսկ անուն-անուն բաղարջներ էին թխում ու բաժանում աղքատներին:

Հարազատների գերեզմաններին զատկական այցելությունները որոշ տեղերում կատարվում էին անմիջապես առավոտյան ժամերգությունից հետո՝ կիրակի օրը, այլ տեղերում երկուշաբթի (դա պայմանավորված էր նաեւ իին ու նոր հանգուցյալներին առանձին-առանձին այցելելու սովորույթով):

Այստեղ խնդիր չենք համարել անդրադառնալ Զատկի տոնի քրիստոնեական մեկնաբանությանն ու կատարմանը, որ կապվում է Քրիստոսի հարության գաղափարին, մանավանդ, որ Եկեղեցական օրացույցում, Ա. Մանուկյանի վկայությամբ, «անջատ կերպով դրուել է Զատիկը եւ Հարությունը»:

## ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Յայոց ավանդական տոները բնապաշտական ծագում ունեն ու արդյունք են՝ մեր նախնիների կողմից իրենց շրջապատող աշխարհի յուրահատուկ ընկալման: Այդպիսին է նաեւ Յամբարձումը՝ բնության բեղունության ու արբունքի, բուսականության աճի, Ծաղկամոր տոնը: Այն համընկնում է գարնանային բուռն աշխատանքների ավարտի շրջանին, այսինքն՝ այն պահին, երբ երկրագործն, իրենից կախված ամեն ինչ անելուց հետո, հայացքը վեր է պարզում եւ բնությունից ու աստվածներից ակնկալում հատուցում:

Սիրո, Երիտասարդության ու վայելքի տոն է Յամբարձումը, որ տոնվում է բնության գրկում, մայիսյան ծաղկունքի մեջ՝ Զատկից 40 օր անց (ըստ պաշտոնական եկեղեցական տոնացույցի):

Տոնն իր ակունքներով կապվում է նախաքրիստոնեական ժամանակաշրջանին: Այդ մասին Զիթունին ուղղակիորեն նշում է. «Թո՞ղ ըսեն, որ Յամբարձումը տօնն է տասնը ինն դար առաջ Պաղեստինի լեռներեն մեկուն վրա կատարուած դեպքի մը: Թո՞ղ վիճակ հանեն՝ իբր հիշատակ Մուտարիայի փոխընտրության, թո՞ղ խաչանիշ կրէ տօնը,- ան տօնն է եղած, խաչի Վարդապետն առաջ, Բնութեան արբունքին, պիտի ըսեմ Բնութեան կոչունքին»:

Տոնի անվանումը, որոշակի խորհուրդ է պարունակում. ըստ Զիթունու, այն ստուգաբանվում է «ամբարում, դիզում, մեծացում փոքր բանի մը»: Եթե Զատկի տոնին առանձնանում, զատվում են բնության գույները, ավարտվում ցանքսի աշխատանքները, ապա Յամբարձմանն արդեն սպասվում է ցանված բերքի աճնան, պտղման, ակնկալիք: Այդ նպատակով էր, որ ժողովուրդը դուրս էր գալիս դաշտերը, երգ ու պարով, ուրախություններով սիրաշահում մայր բնությանը:

Յայաստանի տարբեր շրջաններում տոնը հայտնի էր նաեւ «Ծաղկամոր տոն», «ճակատագրի տոն», «Վիճակ», «Կաթնապրի օր» անվանումներով, որոնք առավել բնութագրական են նրա էությունը բացահայտելու առումով, քանզի Յամբարձումը բնորոշվում է ծաղիկների առատությամբ, խաղիկներով վիճակահանմամբ, մասնակիցների ճակատագրի գուշակությամբ եւ որպես մատաղ՝ կաթնով բաժանելով:

Յամբարձումը սիրո, Երիտասարդության տոն է: Տոնի օրը Երիտասարդ աղջիկներին բույլատրվում էր ազատ դուրս գալ դաշտերը, երգեր ասել, ծանրորություններ հաստատել, որոնք, հաճախ, ճակատագրական էին լինում նրանց կյանքում: Այս տոնը միակն էր, երբ Երիտասարդները անարգել հանդիպում էին, մինյանց վրա «խորհուրդ» անում, փոխադարձ համակրում իրար: Իսկ Յամբարձման վիճակով բաժին ընկած բախտը օ-

րենք էր նաեւ ծնողների համար եւ նրանք, անկախ այն բանից, թե մինչեւ այդ ի՞նչ փեսացու կամ հարսնացու էին ընտրել զավակների համար, տալիս էին իրենց համաձայնությունն ու բարի օրինությունը:

Յամբարձումը նաեւ ճակատագրապաշտական տոն է, որի գլխավոր արարողությունը վիճակ հանելու ծեսն է: Վիճակի բոլոր մասնակիցները հույսով սպասում էին, որ եթե «վիճակի խաղիկով» բարի բախտ է գուշակվել, ապա անպայման իրենց ցանկությունը, իդք կվատարվի:

Տոնի կարեւոր պահերից է Յամբարձնան գիշերը (չորեքշաբթի, լուս ինգչաբթի): Ըստ ժողովրդական պատկերացումների, դա հրաշքների գիշեր է կեսգիշերին բնությունը լեզու է առնում, ջրերը մի պահ կանգ են առնում, երկինքն ու երկիրը գրկախառնվում են, աստղերը՝ համբուրվում: Ողջ բուսականությունն այդ գիշեր ստանում է բուժիչ ու առատացնող հատկություն: ծառերը, ծաղիկներն ու խոտը սովորականից արագ չափերով են աճում, վիճակի պուլիկը «աստղունք» են դնում, որպեսզի խորհրդավոր ուժերի զորության ներգործման շնորհիվ ի կատար ածվեն հաջորդ օրվա գուշակությունները, արու զավակ ունենալու ակնկալիքով՝ տղամարդիկ առագաստ են մտնում... Կանայք վաղ առավոտյան, հիվանդություններից ազատվելու նպատակով, գետում գաղտնի լոգանք են ընդունում (կանանց գետում գաղտնի լոգանք ընդունելը աղերսներ ունի Աստղիկ դիցուիու հայտնի ավանդության հետ: դիցուիին ամեն գիշեր Արածանի գետում լոգանք էր ընդունում եւ, տարիկավոր կտրիծների հայցքներից քողարկվելու համար, Մշո դաշտը պատում մշուշով), ցողով լվանում մազերը, որ առատ աճեն, ցողում անասուններին, որ կաթնառատ լինեն: Այդ գիշեր կանգ է առնում Տիեզերքի անիվը, եւ ով ականատես դառնա այդ կախարդական պահին՝ կվատարվի նրա երազանքը:

Յավատում են, որ այդ օրը հայտնվում է այն ամենաբուժ, չնաշխարհիկ Ծաղիկը, որի արմատը ծեռք բերողը հավերժության գիրկն է ընկնում: Ընդհանրապես ողջ բուսականությանն այս գիշեր վերագրվում է բուժիչ ու առատացնող հատկություն: Աղջիկները թիզով չափում են խոտարույսերը եւ թելով կապում. Եթե գիշերվա ընթացքում դրանք երկարած լինեն, ուրեմն իրենց կյանքն էլ տեսական կլինի կամ իրենց մտքին դրած «խորհուրդը» կվատարվի:

Տոնի մյուս կարեւոր խորհուրդն այն է, որ այդ օրը արգելվում է արյուն հեղել՝ կենդանական զի մատուցել, որը դարձյալ բնության ուժերին սիրաշահելու, կենդանիների բազմացումն ապահովելու միտումն ունի: Այդ օրը ծաղիկներով զարդարում էին գառան, կաթնատու կովի, եզան պարանոցը եւ պտտեցնում գյուղում: Իսկ իբրեւ մատադ եւ տոնական ուտեստ՝ կաթնով ու բանջար էր եփվում: Կաթնովը բաժանվում էր հարեւաններին, բարեկամներին, անցորդներին, այն շաղ էին տալիս արտերում ու այգիներում, որ հունձը բարեհաջող լինի, բերքը՝ առատ:

---

Յամբարձումը հեթանոսական թնապաշտության եւ քրիստոնեական գաղափարախոսության ժողովրդական ընկալման լավագույն զուգորդությունն է: «Այն, ինչ կրոնի վարդապետները չեն կարող հաշտեցնել, ժողովուրդը հեշտությամբ հաշտեցրեց, միացրեց անմիանալին, իր ձեւը տվեց, իր գաղափարը մեջը դրավ ու այդպես «ընդունեց» (Գալուստ միաբան): Այս զուգորդման փայլուն վկայությունն է «Փրկչի» համբառնալու գաղափարի ընդունումը ժողովորի կողմից՝ իրեն սիրահար զույգի՝ ծիշտ նույն ժամին երկինք բարձրանալու եւ աստղ դառնալու հավատալիքի նորովի իմաստավորում:

Մնում է մաղթել միայն, որ Յամբարձումը կատարի բոլորի նվիրական իղձերն ու երազանքները՝ ով չունի կյանքի ուղեկից, վերջապես գտնի իր սրտի ընտրյալին, ով զավակ չունի՝ «ուստի խավո՞թիլ ու բերի ոսկեծիլ տղեն», իսկ հայոց արտերն ու դաշտերը՝ առատ բերք ու բարիք բերեն մեր ժողովորին:

## ՎԱՐԴԱՎԱՌ

Յայոց ավանդական տոնակարգում Վարդավառն ամառային ամենամեծ տոնն է, որը, ըստ Յայ Եկեղեցու տոնացույցի, տոնվում է Զատիկից 14 շաբաթ հետո: Իր էությամբ՝ այն բնապաշտական տոն է եւ գալիս է հազարամյակների խորքից: Նախաքրիստոնեական Յայաստանում այն կապվում էր սիրո եւ գեղեցկության դիցուիկ Աստղիկի հետ, որի մեջյանը ուխտի էին գնում ահել ու ջահել, փառարանում ձոներգերով, բագինին վարդեփնջեր դնելով, զոհաբերություններ անելով:

Քրիստոնեության ընդունումից հետո տոնը արտաքին փոփոխության է ենթակվում՝ պահպանելով, սակայն, իր էությունը: Եկեղեցին այն փոխարինում է Քրիստոսի Այլակերպության կամ Պայծառակերպության տոնով: Պայծառակերպության տոնը նախապես տոնվում էր Յայոց տոնարի տարեգլխիմ՝ Նավասարդ ամսի առաջին օրը՝ օգոստոսի 11-ին (ըստ Աբեյյանի՝ այն տոնվել է օգոստոսի 6-ին): Յետագայում, երբ 551թ. Մովսես Բ Եղիվարդեցի կաթողիկոսի կողմից կատարվեց հայոց տոնարի նորոգությունը, փոփոխվեց եւ տոնի կատարման ժամանակը: Պայծառակերպության տոնը փոխադրվեց Զատիկից 14 շաբաթ հետո Եկող կիրակին: Զատկական շրջանի մեջ մտնելով՝ Վարդավառը անցավ շարժական տոների շարքը եւ կարող է նշվել 35 օրերի ընթացքում հունիսի 28-ից մինչեւ օգոստոսի 1-ը:

Վարդավառ բառը տարբեր իմաստներով է ստուգաբանվում, որոնք բոլորն ել բնութագործ են տոնը, ինչպես նաև՝ մատնանշում դրա խորհուրդները: Մի տարբերակով «վարդավառ» բառը կազմված է վարդ (ուարդ)-ջուր եւ վառ-սրսկել, լվանալ արմատներից, նշանակում է ջրցանություն, որը կազմում է տոնական արարողակարգի գլխավոր մասը: Որոշ հեղինակների կարծիքով ել՝ այն նշանակում է «կրակավառ», «հրավառ»: Եվ իրոք, հուլիսին, այսինքն՝ հրոտից ամսին, երբ արեւը հասնում է իր կիզակետին, հրավառվում, չորանում է բնությունը, մարդիկ զանգվածքար ջրցանություն են կատարում եւ աստվածներից ջուր խնդրում:

Տոնի համան ու հոտը կազմում էին համատարած ջրցանությունները: Կաղ առավտուից իրար վրա ջուր էին լցնում բոլորը՝ ով ինչով կարող էր՝ հաշվի չառնելով ո՞չ տարիքը, ո՞չ սեռը, ո՞չ հասարակական դիրքը: Ջուր էին շփում չխոսկան հարսները կեսրայրի վրա, առօրյայում քավորի ներկայությունից խուսափող սանամայրն անգամ քավորի վրա: Եվ ոչ չէր դժգոհում կամ վիրավորվում, որովհետեւ այդ օրը ջուրը համարվում էր ամենազորեղ, ամենաբրուժիչ: Այս ամենն ուղեկցվում էր ավանդական երգ ու պարով, խաղերով: Մարդիկ իրար վարդեր էին նվիրում, իսկ սիրահար երիտասարդները աղավնիներ էին թօցնում, ու թե աղավնին երեք անգամ

պտտվում էր սիրած աղջկա տան կտուրին, նույն աշնանը հարսնության էին տանում նրան:

Մի փոքր այլ է պատկերը լեռնային շրջաններում, ուր համեմատաբար զով է եւ ջրանությունը Վարդավառի տոնակատարության մեջ միայն խորհրդանշական իմաստ ունի: Այդունք գլխավոր դերը ավելի շատ տրվում է կենդանական զոհաբերություններին, հեռավոր ուխտագնացություններին, ուրախություններին ու խնջույքներին: Ժողովուրդը, մի երկու օրվա պաշար վերցնելով, տանելով զարդարված մատադացու կենդանիներ, գնում է դեպի սրբազն աղբյուրները, դրանց մոտ զոհ մատուցում հուսալով աստվածների բարեհաճությունը:

Տոնի օրը որոշ տեղերում «Նուրին» տիկնիկներ էին պտտում, դրանց վրա ջուր լցնում եւ ձու, այսուր, յուր հավաքելով՝ կատարում յուրատեսակ զոհաբերություն: Շատ շրջաններում էլ եկեղեցի էին տանում հացահատիկի հասկեր, խնդրելով. «Աստված, պարզերես պահե մեզ Վարդավառի տաք ու շոգեն...»:

Ինչպես ավանդական բոլոր տոնները, Վարդավառը իր մեջ նաեւ պտղաբերության խորհուրդն է կրում: Այդ մասին է վկայում Նախիջենանում ընդունված «խնդում տօքի» սովորույթը. նշանված աղջկները մի ամանում ցորեն կամ զարի էին ծլեցնում, հետո այդ ամանի մեջ թեւավոր մի փայտ էին ամրացնում, այն զարդարում խնձորով, մանր վարունգով ու վարդերով, որից հետո, մի տարեց կին, «խնդրումը» պտտեցնելով՝ տանում էր հրապարակ: Դրա շուրջը հանդիսականները պարում էին, վերջում՝ բաժանում մրգերն ու ծաղիկները: Տարեց կինը, որոշ հետազոտողների կարծիքով մարմնավորում էր Անահիտ աստվածուհուն, որը հովանավորում էր պտղաբերությունը եւ տոնի օրը առաջին անգամ խնձոր կամ տանձ (որոնք կոչվում էին վարդավառյան) ուտելու երեւույթը նրան սիրաշահելու խորհուրդն է պարունակում:

Վարդավառը, թերևս միակ տոնն է, որն ընտանիքի անդամներին, նույնիսկ ամբողջ ազգատոհմը հավաքելու կարեւոր խորհուրդն ունի, եւ պատահական չէ, որ շատ շրջաններում այդ օրը պարտադիր գալիս են հեռավոր քաղաքներում ապրող զավակներն ու հարազատները: Նրանք հանդիպում են հայրական հարկի տակ, նվերներ փոխանակում, առնում միմյանց կարոտը, արտահայտում փոխադարձ սեր ու նվիրվածություն: Փաստորեն, դա նաեւ միակ տոնն է, որը տարվա մեջ մեկ անգամ ազգակիցներին համախմբելու, նրանց կապը մշտապես պահպանելու դերն ունի:

Վարդավառյան տոնակատարության մյուս կարեւոր խորհուրդը սերն է:

Յայոց մեջ սիրո, նվիրումի բազմաթիվ օրինակներ կամ, որոնց մեջ, սակայն, առանձնանում է Վահագն դիցի ու Աստղիկ դիցուհու սերը:

Որոշ ուսումնասիրողներ հենվելով պատմական այն տվյալների վրա, ըստ որոնց Աստղիկը անվանվում էր «Վարդանատն», Վարդավառ բառը կապում են վարդ արմատին: Վարդեր նվիրելով ու վարդաջուր ցողելով՝ նա սեր էր սփռում հայոց երկրում, իսկ հզորաբազուկ Վահագնը, մշտապես պայքարելով Չարի դեմ, պահում ու պաշտպանում էր այդ սերը, քանզի առանց սիրո բնությունը կատավի փուշ ու տատասկով: Սա է վկայում նաեւ մեկ այլ պատում. Մի անգամ Աստղիկը, լսելով իր սիրելիի վիրավորվելու բոքը, ոտարորիկ շտապում է նրան վայրկյան առաջ տեսնելու: ճանապարհին, նա անգիտորեն վարդենիներ է տրորում եւ նրա խոցված ոտքերի արյունից վարդերը կարմրում են: Այսպես էլ առաջանում է սիրո ծաղիկը՝ կարմիր վարդ:

Եկեղեցական մեկնաբանությամբ Քրիստոսն է նմանեցվում վարդի, ու եթե «մինչ ի յայլակերպութիւն որպէս թէ վարդ ի կոկոնի էր, եւ յայլակերպիլն ի թարօն՝ իրը թէ վարդ վառեցաւ» (Տ.Թողոգոն պատրիարք):

Պահպանված որոշ սովորությունների մեջ - վարդերով զարդարվել, իրար վրա ջուր ցողել, աղավնի թօցնել - քրիստոնեական Եկեղեցին տեսնում է աստվածաշնչյան իին ավանդությունների արձագանքներ՝ կապված Զրիեղեղի, Նոյան աղավնու եւ այլնի հետ: Ժողովրդական մի ավանդությամբ Աստղիկն էլ համարվում է Նոյ նահապետի՝ Զրիեղեղից հետո ծնված դուստրը:

Ինչեւէ, Վարդավառի տոնը որքան էլ իին, որքան էլ երկար ու ծիգ դարերով անցած, քրիստոնեական գաղափարախոսության փորձությանը ենթարկված այսօր էլ շարունակում է մնալ որպես ազգային տոն:

## ԱՍՏՎԱԾԱՄՈՐ ՏՈՆԸ

Յայոց առաքինությունների մեջ միշտ էլ նշանակալից տեղ են գրավել զգաստությունը, չափավորությունը, համեստությունը: Այս հատկանիշներն են մարմնավորել Անահիտ դիցուիին, «որ է փառք զազգիս մերոյ եւ կեցուցիչ, որ է մայր ամենայն զգաստութեանց, բարերար ամենայն մարդկան բնութեան» (Ազաթանգեղոս):

Անահիտը, որին Դ. Ալիշանը բնորոշել է «սեփականագոյն եւ սիրելագոյն ի դիս Յայոց», հայ հեթանոսական դիցարանում զբաղեցնում է բացառիկ տեղ: Նա համարվում էր մայր աստվածուհի՝ կոչվելով Ոսկեհատ, Ոսկեծին, Ոսկեմայր: Յայ թագավորները Անահիտից էին խնամակալություն եւ զորություն հայցում, հայ օրիորդները նրանից խնդրում էին լավ անուսին, կանայք հեշտ ու բախտավոր ծնունդ, իսկ ամուլ կանայք՝ երեխա: Երբ երաշտ էր լինում, Անահիտի արձանն էին գյուղե-գյուղ ման տալիս եւ անձրեւ խնդրում: Անահիտին էին դիմում նաեւ հիվանդությունների ժամանակ:

Սատենագիրների՝ մեզ թողած տեղեկություններից բացի, Անահիտի պաշտամունքի մասին ինանում ենք նաեւ «քրիստոնեացված» վերապրումների միջոցով:

Գր. Լուսավորիչը քրիստոնեական խորհուրդները հարմարեցրեց ժողովրդին. Անահիտը փոխարինվեց Մարիամ Աստվածածնով (ի դեպ կարծիք կա, որ Մարիամ անունը Անահիտի ծեւափոխված տեսակն է. ժողովրդի մեջ պահպանված է Մայրան, այսինքն՝ Մայր Անահիտ): Անահիտական տաճարները քանդվեցին եւ նրանց տեղում կառուցվեցին եկեղեցիներ՝ Աստվածածի անունով, Անահիտի տոնները վերափոխվեցին Աստվածածնի տոններով, իսկ Անահիտ դիցուիուն վերագրվող հատկանիշները տրվեցին Մարիամ Աստվածածնին: Եվ այսպես, Անահիտի պաշտամունքը շարունակեց ապրել ու փոխանցվել սերունդ Մարիամի անունով:

Վերն արդեն նշել ենք, որ Անահիտը պաշտվել է որպես մայրության, պտղաբերության աստվածուիի: Արա հետ կապված ժողովրդի մեջ մնացել են նի շարք սովորություններ: Օրինակ. Նոր Բայազետի Օրդակլու գյուղի Թուլս Մանուկ Վայրում ուխտի էին գնում ամուլ կանայք երեխա ունենալու հույսով: Նրանք իրենց գոտին (իսկ գոտին կանացի սեռականության խորհրդանիշն է) դնում էին սուրբ քարի վրա, իրենք անցում էին քարի նեղ անցքով, իսկ հետո խնդրում որեւէ օտար տղամարդու կապել այն: Այս վայրում հնում եղել է Անահիտի մեհյան, եւ այստեղ կատարվել են ծեսեր ու զիհաբերություններ առ դիցուիին: Իսկ ուշ շրջանում այդ ամենը կապվել է Մարիամ Աստվածածնի զորության հետ:

Որպեսզի տարվա բերքը առատ լինի, Անահիտական տոններին

մարդիկ ցորենի հասկերից փնջեր, ծառերի ոստերից հյուսված պսակներ էին նվիրաբերում դիցուհուն: Այս սովորույթը եւս պահպանվել է: Աստվածածնի տոներին ժողովուրդը եկեղեցի է տանում ճյուղերից ու ցորենի հասկերից հյուսված խաչփնջեր, պսակներ:

Անահիտի պաշտամունքի տարրեր են արտացոլված նաեւ հայ էպոսում «Սասնա ծռերում»: Յետազոտողներից մի քանիսը գտնում են, որ Անահիտը էպոսում արտահայտվել է Դեղունի կերպարով: Խոկ Կ. Մելիք-Փաշայանի կարծիքով Անահիտը էպոսում դրսեւորվել է խանդութ խանումի կերպարով: Կարծիք կա նաեւ, որ Անահիտը կերպավորվել է պառավ Նանիով, որը Դավթին զգաստության է կոչում՝ ուղարկելով հայրենիքին պաշտպան կանգնելու: Պետք է ավելացնել, որ Անահիտը հայտնի է իբրև «ռազմատենչ աստվածուհի»:

Անահիտին վերագրվել են նաեւ բժշկական ունակություններ: Ըստ ժողովրդի, Անահիտը սեռական հիվանդությամբ պատժում էր թեթևարոներին, և հիվանդությամբ վարակվածները հենց Անահիտից էլ բժշկվելու օգնություն էին խնդրում:

Յետազյառում, Անահիտի բժշկելու ունակությունը փոխանցվել է Մարիամ Աստվածածնին: Վեներական հիվանդությունը կոչվել է «Տիրամոր յարա» եւ այդ հիվանդությամբ տառապող մարդիկ՝ բուժվելու համար ուխտի են գնացել Աստվածածնի եկեղեցի:

Անահիտին նվիրված տոներից ամենաշքեղը նշվում էր հայոց Նավասարդ ամսին: Այս տոնը կապված էր պտուղների հասունացման հետ: Տոնակատարության ժամանակ ուխտավորներ էին հավաքվում Անահիտական մեհյանների շուրջը: Կատարվում էին ծիսակատարություններ, որոնք ուղեկցվում էին ձոներով, երգերով, ապա տեղի էին ունենում խնջույքներ: Աստվածամոր այս տոնը մեծ շքեղությամբ է կատարվել Յայաստանում, որին մասնակցել են նաեւ թագավորներն իրենց շքախմբերով:

Այս տոնը նմանապես փոխարինված է Սարիամ Աստվածածնի տոնով եւ կոչվում է «Վերափոխումն Աստվածածնի»: Ըստ հայ եկեղեցու տոնացույցի, այն նշվում է օգոստոսի 12-ից 18-ը հանդիպող կիրակին: Տոնին զուգակցվող նշանավոր իրողություններից մեկը եկեղեցում խաղողի օրինումն է (խաղողօրինեք), որի հիմնական խորհուրդն է՝ տարվա առաջին բերքի նվիրաբերումը Աստծուն կամ նրա տաճարին: Դրանով նաեւ օրինություն է հայցվում, որ այգիները բերրի լինեն:

Ինչեւէ, այսօր Աստվածամոր տոնի հիշատակումը սոսկ ավանդապահություն չէ. այն հայուհիներիս զինում է հայ կնոջը հատուկ առաքինություններով, որոնց պակասն այնպէս ահազանգում է ներկան:

## ՍՈՒՐԲ ԽԱՉ

Ս. Խաչը կամ Խաչվերացը Յայ Եկեղեցու կարեւոր տոներից մեկն է, հաստատված՝ խաչի վերադարձը պանծացնելու ու, միաժամանակ, զորությունը ներբռդելու համար: Մեր նպատակը չէ ներկա շարադրանքում անդրադառնալ տոնի Եկեղեցական բնույթին, ուստի կահմանափակվենք միայն որոշ պատճական տվյալների հաղորդմամբ եւ հիմնականում կանդրադառնանք տոնի ազգային բովանդակությանն ու արարողակարգին:

610թ. պարսից Խոսրով Բ թագավորը հարձակվում է Բյուզանդիայի վրա եւ 614թ. գրավում նաեւ Երուսաղեմը՝ համարյա կործանելով ամբողջ քաղաքը: Գերի է տարվում նաեւ Քրիստոսի խաչափայտը: Յերակը կայսրը խաչափայտն ազատագրելու համար, հարձակվում է պարսիկների վրա եւ հաղթանակ տանում (նրա բանակում կրվում էին նաեւ Յայատանի հունական մասի գնդերը՝ Մժեծ Գնունու ղեկավարությամբ): Կնքվում է խաղաղության դաշն, որի կարեւոր կետերից մեկն էր խաչափայտի վերադարձը: Յերակը այն դարձյալ Երուսաղեմ է փոխադրում, որն ուղեկցվում է մեծ հանդիսություններով ու կրոնական արարողություններ: Այդ դեպքի հիշատակը հավերժացնելու համար, բոլոր քրիստոնյա Եկեղեցիներում հաստատվում է Խաչվերացի տոնը (սեպտեմբերի 14): Յայոց Եկեղեցում Խաչվերացը տոնվում է սեպտեմբերի 11-17-ն ընկած կիրակի օրը:

Ինչպես հավաստում են ազգագրական աղբյուրները, ժողովրդի մեջ տոնը գլխավորապես առնչվում է ննջեցյալների (նանավանդ նոր մահացածի) հիշատակը նշելու, պահպանելու հետ, դրանով իսկ՝ յուրօրինակ ձեւով սերունդներին ավանդելով նախնյաց պատճությունը:

Այսպես. Ս. Խաչի օրը Շիրակում թե՛ քաղաքում եւ թե՛ գյուղերում, համարյա յուրաքանչյուր տուն մի ուլ էր մորթում, ամբողջությանք կախում թոնրում ու խորովում: Այնուհետեւ, որպես մատադ, այն բաժանում էին մոտ դրացիներին: Այդ մսից փաթաթում էին լավաշի մեջ եւ իբրև ննջեցյալների բաժին, տանում դնում էին գերեզմանատան քարերի վրա: Այդ օրը մոտ ազգականները նաեւ նոր ննջեցյալատիրոց տուն էին ուղարկում սեւ հագուստներ ու մի կենդանի ուլ: Զանգեզուրում նույն տարում ննջեցյալ ունեցողները Ս.Խաչի ուրբաթ օրը ոսառվ շորվա էին եփում ու իբրև հոգեբաժին բաժանում, գերեզմանները օրինել էին տալիս, ինչպես նաեւ ուխտ էին գնում մոտակա վանքերն ու ոչխարներ զոհաբերում: Ս.Խաչի օրը ննջեցյալներին բաժին տանելու եւ նրանց հիշատակը հարգելու սովորությունը ընդունված էր եւ մինչեւ այժմ էլ կատարվում է ամբողջ Յայատանում ու իր արմատներով առնչվում է նախնիների պաշտամունքի հետ,

դրանով իսկ մշտապես պահպանելով հոգեւոր կապը իին ու նոր սերունդների միջեւ: ճշմարիտ է ասված. «Նորահաս սերունդը կտրվեց անցնող կամ անցած գնացած սերունդներից՝ նա էապես կտրվում է մինչ այդ գոյւթյուն ունեցող ցեղի արժեքներից ու սրբություններից... Չին սերունդից կտրվողը դառնում է հոգեպես անհող եւ անուղի: Եականը հոգեհաղորդակցությունն է սերունդների միջեւ, որի շնորհիվ վերջինները փոխանցում են ցեղի հավիտենական բոցը... Հոգեհաղորդակցվել, ասել է՝ պատմական հիշողությամբ վերապրել անցյալ սերունդների կյանքը՝ նրանց ճակատագրին կապելով մերը». (Գ.Նժդեհ):

Ահա, իենց այդ խորհուրդն ունի Ս.Խաչի տոնը, որը նախնիների հիշատակը պահպանելու առումով, թերեւս, միակն է մեր տոնակարգում: Ուստի, պատահական չէ, որ մեր ժողովուրդը իր «մեծ ներելների» պաշտամունքը դարերով փոխանցել է նրանց հիշատակին նվիրված տոներով («Վարդանանց», «Սահակ-մեսրոպյան»), իսկ Ս.Խաչը ամեն տարի այդ ամենը սրբագրում է հանձինս ներկա ու անցյալ ննջեցյալների:

Որ Ս.Խաչի գլխավոր խորհուրդը նախնիների հիշատակը հավերժացնելու մեջ է, վկայում է նաեւ հետեւյալ իրողությունը. ինչպես հաղորդում է հայագետ Ս. Մինասյանը, Տավոսյան լեռներում կար մի վայր, ուր, դեռ մինչեւ մեր դարասկիզբը, անհիշատակելի ժամանակներից, ամեն տարի սեպտեմբերի 14-ին շրջակա գավառներից հանախնբվում էին բարեկամ ու թշնամի ազգեր (հայեր, քրոներ, ասորիներ եւ այլն) ողջակեզ մատուցելու առ Աստուած: «Նոյի զոհաբերութեան ընդունուած թուականն է այս օրն, երբ ջրհեղեղին փրկեալներու նահապետը իր առաջին գոհաբանական ողջակեզն մատոյց առ Աստուած»:

Ուստի, տոնելով Ս. Խաչը, հանգստություն մաղթենք մեր նախնիների շիրիմներին ու վերածնվե՛նք մեր մեծերի պայծառ օրինակով...

## ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ

Սր. Գետրդի տոնը, թեեւ չի պատկանում ավանդական մեծ տոների շարքին, բայց ընդունված ու սիրելի տոն է հայոց մեջ: Այն համընկնում է աշնանամուտի պասին եւ կոչվում է նաեւ Սր. Գետրդի պաս, որը, սակայն, չի սահմանափակվում ուտելիքների արգելքով: Ըստ Հայ եկեղեցու տոնացույցի՝ այն ընկնում է Կարագա խաչի (Սր, Խաչից 14 օր հետո եկող կիրակին) նախընթաց շաբաթ օրը:

Ընդհանրապես, ազգային տոները, հայոց մեջ ուղեկցվում էին հասարակական մատաղներով, ուխտագնացություններով ու կերուխումներով: Այս առումով, բացառություն չի կազմում նաեւ Սր. Գետրդի տոնը: Նրա անվան ուխտատեղիներ կային Սիսիանում, Վասպուրականում, Ղգլարում, Բիթլիսում եւ այլուր: Ներկայունս, այդ օրը ժողովուրդը մեծ խճբերով այցելում է Նորագավիք Սր. Գետրդ եկեղեցին: Յետաքրքիր է, որ ժողովուրդը բոլոր տոների վերաբերյալ, անկախ տոնի քրիստոնեական մեկնաբանությունից ու եկեղեցական արարողակարգից, ունի իր առանձնահատուկ վերաբերմունքը: Այսպես. Զավախքում այս տոնը կոչվում էր «Ծռատոն»: Այդ օրը ոչ ոք գործ չէր անում, վախենալով, որ կծռվի: Յավատում էին, թե շատերը գործ են արել եւ անմիջապես ծեռքերը, ոտքերը ծռվել են: Իսկ եթե ստիպված էին որեւէ անհետաձգելի բան անել, ապա, պատժից խուսափելու նպատակով, դրանից անմիջապես հետո մի քիչ գարի էին ցանում: Յավատում էին, թե ցանած գարին ծուռ է դուրս գալիս՝ իր վրա կրելով Սր. Գետրդի պատիժը: Յետեւաբար, քանզի նրա տոնին ուտելիքի որեւէ սահմանափակում չկար, հավանաբար, պասը վերաբերում էր միայն գործ անելուն, իսկ գործ անելու հետ կապված արգելքները մեր կենցաղում շատ ընդունված էին (օրինակ՝ չորեքմուտք, ուրբաթմուտք, կիրակմուտք օրերի արգելքները եւ այլն):

Սր. Գետրդին վերագրվում էր ապավինող, պաշտպանող էություն: Այսպես. Մոքսում նրա անունով մի ուխտատեղի կար, որը հասարակ մի մատուռ էր, ուր անփոփված էր Սր. Գետրդի մասունքը: Ոչ միայն հայերը, այլեւ քրդերը հաճախ էին այդտեղ ուխտի գալիս: Բացի այդ, փախուստի, երկյուղի ժամանակ ամեն տեսակ իրեր բերում դնում էին այնտեղ իբրեւ «ամանաթ», ավանդ եւ ոչ ոք չէր համարձակվում դրանք վերցնել:

Յետաքրքիր է նաեւ ժողովողական ավանդությունը՝ Փութկու (Պուտուկի) Սր. Գետրդի մասին. Բիթլիսի վիլայեթի Բարուար գյուղում մի քուրդ հովիկ է ապրելիս լինում: Յայերը նրան հող են տալիս, քուրդն ընտանիք է կազմում եւ մի քանի տարվա ընթացքում նրա սերունդներն այնքան են բազմանում, որ շուտով գյուղը մահմեդականանում է, եղած հայերն էլ հեռանում են: Այդ ժամանակ Սր. Գետրդը երեւում է եկեղեցու ժամ-

կոչին եւ ասում. «Վերցրու տար ինձ այստեղից»: Ժամկոչը Եկեղեցում մի պուտուկ է գտնում՝ մեջը սրբի ականջը, վերցնում է այն եւ գնում Մոքս: ճանապարհին երկրի կառավարիչ Միր Յասանը հետապնդում է նրան: Շուտով քրդերը տեսնում են, որ ժամկոչի մեջքից լույս է բարձրանում: Երբ հասնում են նրան, վերջինս պուտուկը դնում է քարի վրա, այն բացվում է իր մեջն առնելով պուտուկն ու փակվում: Յրաշքի տեղում կառուցվում է Փութկու (Պուտուկի) Սր. Գեւորգ Եկեղեցին, որը հետագայում վերածվում է ուխտատեղի:

Սր. Գեւորգի տոնը ընդունված է նաեւ այլ ժողովուրդների մեջ (Վրացիներ, ռուսներ, հույներ եւ այլն), սակայն ամենուրեք այն ազգայնացվել է, իսկ սուրբն էլ դարձել է տվյալ ազգի ներկայացուցիչը: Այս առումով հայերը եւս բացառություն չեն կազմում, որոնք նրան վերագրում են նաեւ ռազմական, զինվորական հատկանիշներ: Որոշ հետազոտողներ նրան նույնացնում են հայոց ռազմի աստված Վահագնի հետ, որը «քրիստոնեացվել» է:

Ինչեւէ, Սր. Գեւորգի տոնը եւս մարդկանց միատեղ հավաքելու, բարեկամացնելու եւ վերածնելու կարեւոր խորհուրդն ունի:

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1. Նոր տարի .....	3
2. Սբ. Կարապետ .....	6
3. Սբ. Սարգիս .....	8
4. Տրնդեզ .....	10
5. Բուն բարեկենդան եւ Մեծ Պաս .....	12
6. Ծաղկազարդ .....	15
7. Զատիկ .....	17
8. Համբարձում .....	20
9. Վարդավառ .....	23
10. Աստվածամոր տոնը .....	26
11. Սբ. Խաչ .....	28
12. Սբ. Գեւորգ .....	30